

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	-	-	<p>Սարքը նախատեսված պետք է լինի բարձր մաքրության թորած ջուր ստանալու համար՝ լաբորատոր և բժշկական նպատակներով: Այն պետք է լինի լիովին ավտոմատացված, ունենա ներկառուցված ջրի կուտակման տարողություն և էներգախնայող համակարգ: Նյութեր՝ ջրի և գոլորշու հետ շփվող բոլոր դետալները (ներառյալ թորման խցիկը, պահեստային բաքը, խողովակները) և ջեռուցման տարրերը (տաքացուցիչ) պետք է պատրաստված լինեն AISI 304 L (կամ համարժեք) տիպի չժանգոտվող պողպատից՝ կոռոզիակայունությունն ապահովելու համար: Սարքի արտաքին պատյանը պետք է պատրաստված լինի ցինկապատ պողպատից՝ պատված Էլեկտրաստատիկ փոշեներկմամբ՝ արտաքին ազդեցություններից պաշտպանելու համար: Սառեցնող համակարգը պետք է տեղադրված լինի պահեստային բաքի վերին հատվածում (ներսում)՝ ապահովելով կոմպակտություն և ջերմափոխանակման արդյունավետություն: Գազագրկում՝ Սարքի վերին հատվածում պետք է առկա լինի հատուկ գազանցք՝ ածխաթթու գազի (CO2) հեռացման համար: Սպասարկման</p>

հարմարավետություն՝ պահեստային բաքը և թորման խցիկը պետք է ունենան հեշտ բացվող/բարձրացվող կափարիչներ՝ ներքին մակերեսները հեշտությամբ մաքրելու և սպասարկելու համար: Թորած ջրի դուրսբերման համար սարքը պետք է հագեցած լինի հարմարավետ փականով ծորակով: Սարքը պետք է ունենա ինչպես պատից կախելու, այնպես էլ սեղանի վրա տեղադրելու հնարավորություն: Այդ նպատակով այն պետք է համալրված լինի հատուկ կախիչներով (ամրացման բռնակներով) և հարթ մակերեսի վրա կայունությունն ապահովող սիլիկոնե ոտքերով: Ավտոմատ կառավարում՝ պահեստային բաքը ամբողջությամբ լցվելու դեպքում սարքը պետք է ավտոմատ անջատվի (ներառյալ ջրի մուտքը)՝ ջրի և էլեկտրաէներգիայի ավելորդ ծախսից խուսափելու համար: Պահեստային բաքից ջուր վերցնելիս (երբ մակարդակը իջնում է), սարքը պետք է ավտոմատ վերսկսի աշխատանքը: Անվտանգություն՝ թորման խցիկում ջրի անբավարար մակարդակի կամ գերլցման դեպքում պետք է գործի վթարային անջատման ավտոմատ համակարգ: Ջրամատակարարման վերականգնման կամ ցուցանիշների նորմալացման դեպքում սարքը պետք է ինքնուրույն վերադառնա աշխատանքային ռեժիմի: Թորման արտադրողականություն՝ $4 \pm 0,5$ լիտր/ժամ Արտադրված ջրի էլեկտրահաղորդականություն՝ $2.3 (\pm 0.5)$ թույլատրելի շեղումով) մկՍմ/սմ, 25°C ջերմաստիճանում Ներկառուցված պահեստային բաքի ծավալ $8 \pm 0,5$ լիտր Սառեցման ջրի ծախս ոչ ավել, քան 45 ± 3 լիտր/ժամ էլեկտրական հզորություն 3.0 կՎտ ($\pm 10\%$ թույլատրելի շեղումով) էլեկտրասնուցում՝ $220-230$ Վ, $50-60$ Հց, միաֆազ: Սարքը պետք է մատակարարվի տեղադրման և միացման համար անհրաժեշտ բոլոր դետալներով (խողովակներ, միացման պարագաներ և այլն), ինչպես նաև իրականացվի տեղադրման աշխատանքները: Առնվազն 1 տարվա երաշխիք: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումը՝ մասնակցի կողմից: Մատակարարումից

առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БНЗ-ЕЦΔΥΠΖΡ-26/52 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
11			